Հավելված N 1
ՀՀ կառավարության 2013 թվականի
փետրվարի 7-ի N 131 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՌՈՏԱՑԻԱ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմի կամ աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմիններ) և օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների, միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչությունների (այսուհետ՝ օտարերկրյա պետություններում գործող դիվանագիտական ծառայության մարմիններ) պաշտոններում դիվանագետների ռոտացիա (այսուհետ՝ ռոտացիա) իրականացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Ռոտացիան իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմիններում և օտարերկրյա պետություններում գործող դիվանագիտական ծառայության մարմիններում դիվանագետի՝ իրար հաջորդող աշխատանքային փուլերով ծառայությունն ապահովելու նպատակով:

3. Ռոտացիան Հայաստանի Հանրապետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների և օտարերկրյա պետություններում գործող դիվանագիտական ծառայության մարմինների դիվանագիտական ծառայության հավասարազոր պաշտոններում դիվանագետների տեղափոխումն է:

4. Հայաստանի Հանրապետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայության ժամկետն առնվազն երկու տարի է:

5. Օտարերկրյա պետություններում գործող դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայության ժամկետը երկու տարի է:

6. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի (այսուհետ՝ նախարար) որոշմամբ օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում դիվանագետի երկամյա աշխատանքային փուլի ժամկետը կարող է երկարաձգվել, սակայն մեկ տարվանից ոչ ավելի ժամկետով, եթե՝

1) օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարը, համաձայնեցնելով դիվանագետի հետ, հիմնավորում է ներկայացնում.

2) դա բխում է դիվանագետների տեղաբաշխման ծրագրումն արդյունավետորեն իրականացնելու անհրաժեշտությունից:

7. Օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում աշխատանքային փուլի ժամկետը լրանալուց անմիջապես հետո չի թույլատրվում դիվանագետի նոր նշանակումը մեկ այլ օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում:

8. Անհրաժեշտության դեպքում, դիվանագետի համաձայնությամբ, թույլատրվում է դիվանագետի տեղափոխումն օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության այլ մարմին՝ առնվազն մեկ տարի ժամկետով՝ պայմանով, որ օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմիններում դիվանագետի ծառայության ընդհանուր ժամկետը չգերազանցի 3 տարին:

9. Ռոտացիան իրականացվում է դիվանագետների տեղաբաշխման ծրագրման հիման վրա:

10. Դիվանագետների տեղաբաշխման ծրագրումը Հայաստանի Հանրապետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմիններում և օտարերկրյա պետություններում գործող դիվանագիտական ծառայության մարմիններում ռոտացիայի ենթակա դիվանագետների մասին տեղեկությունների (անհատական տվյալներ, պաշտոն, ծառայության ժամկետ և վայր, այլ անհրաժեշտ տվյալներ) հավաքագրումն ու դասակարգումն է:

11. Դիվանագետների մասին տեղեկությունները դասակարգվում են՝ հաշվի առնելով դիվանագետի՝ տվյալ պաշտոնում ծառայության ժամկետը և վայրը, դիվանագիտական աստիճանը, ռոտացիայի արդյունքում զբաղեցվելիք պաշտոնը, ինչպես նաև տվյալ դիվանագետի նախապատվությունները:

12. Օտարերկրյա պետություններում գործող դիվանագիտական ծառայության մարմիններում որոշ պաշտոններում նշանակումների համար նախարարի հրամանով կարող է սահմանվել վերապատրաստման պահանջ:

13. Ռոտացիան իրականացվում է, որպես կանոն, ընթացիկ տարվա դեկտեմբեր-հունվար և հուլիս-օգոստոս ժամանակահատվածներում:

14. Ռոտացիայի նպատակով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման հարցերով պատասխանատու ստորաբաժանումը նախատեսվող ռոտացիայից առնվազն վեց ամիս առաջ Հայաստանի Հանրապետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող, ռոտացիայի ենթակա դիվանագետների և օտարերկրյա պետություններում գործող դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող՝ ռոտացիայի ենթակա դիվանագետների ցանկերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարին (այսուհետ՝ գլխավոր քարտուղար):

15. Գլխավոր քարտուղարը մեկամսյա ժամկետում՝ ցանկերում ընդգրկված՝ ռոտացիայի ենթակա դիվանագետների թեկնածությունները համաձայնեցնում է Հայաստանի Հանրապե-

տության արտաքին գործերի նախարարության աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների կամ աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման ղեկավարների և օտարերկրյա պետություններում գործող դիվանագիտական ծառայության համապատասխան մարմինների ղեկավարների, ինչպես նաև համակարգող փոխնախարարների հետ՝ պարզելով նաև սույն կարգի 6-րդ կետում նշված հիմքերով դիվանագետի աշխատանքային փուլի երկարաձգման անհրաժեշտությունը:

16. Սույն կարգի 15-րդ կետում նշված համաձայնեցումներից հետո՝ գլխավոր քարտուղարը կոնկրետ պաշտոններում նշանակելու համար առաջարկվող դիվանագետների թեկնածությունները ներկայացնում է նախարարին՝ որոշում ընդունելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2013 թվականի
փետրվարի 7-ի N 131 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԶՈՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ

Հայաստանի Հանրապետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնի պաշտոնները	**Օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնի պաշտոնները**
Նախարարության աշխատակազմի վարչության պետ Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման ղեկավար Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման ղեկավարի տեղակալ	արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար
Նախարարության աշխատակազմի կամ նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման բաժնի վարիչ (պետ), խորհրդական	դեսպանության խորհրդական, հյուպատոս
Առաջին քարտուղար	առաջին քարտուղար, փոխհյուպատոս
Երկրորդ քարտուղար	երկրորդ քարտուղար
Երրորդ քարտուղար	երրորդ քարտուղար
Կցորդ	կցորդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ